

Գոլդեն Փելիս Հյուրանոց ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորի եզրակացություն  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների վերաբերյալ



«ԱՅ ԷՖ ՓԻ» ՍՊԸ  
 22, ք. Երևան, Կոմիտաս 49/3, 7-րդ հարկ  
 E-mail: [info@ifp.am](mailto:info@ifp.am)  
 Հեռ. +(374) 11 96 77 77

“IFP” LLC  
 49/3 Komitas St., 7<sup>th</sup> floor., Yerevan, RA  
 E-mail: [info@ifp.am](mailto:info@ifp.am)  
 Tel. +(374) 11 96 77 77

## Անկախ աուդիտորի եզրակացություն

*Ներկայացվում է «Գոլդեն Փելիս Հյուրանոց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավարությանը*

### Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գոլդեն Փելիս Հյուրանոց» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում ներկայացված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի համաձայն (ՖՀՄՍ-ներ):

### Վերապահումով կարծիքի հիմքեր

#### ա/ Անշարժ գույքի գնահատում

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում Ընկերությանը պատկանող անշարժ գույքը հաշվառված է վերագնահատված արժեքով 15,511,369 հազար դրամ: 2016թ. հուլիսի 19-ին անկախ գնահատողի կողմից իրականացվել է անշարժ գույքի գնահատում: Առ այսօր չի իրականացրել շենքի հետագա վերագնահատում, որը չի համապատասխանում «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ի պահանջներին:

Մենք անկարող էինք ինքներս գնահատել շենքի իրական արժեքը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև որոշել հնարավոր ճշգրտումների ազդեցությունը հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճի հողվածներում:

#### բ/ Պաշարների հաշվառում

Ընկերության նյութաձախսը 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կազմել է 520,322 հազ.դրամ՝ ներկայացված է վաճառքի ինքնարժեքում ծանոթագրություն 6-ում: Ընկերության պաշարները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են 155,534 հազար դրամ գումարով: Մենք անկարող էինք ձեռք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կատարված նյութաձախսի, ինչպես նաև 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների հաշվեկշռային արժեքի վերաբերյալ, քանի որ Ընկերության կողմից չեն պատարաստվում նյութաձախսի պատշաճ հաշվետվություններ, ինչպես նաև պաշարների անալիտիկ հաշվառումը ամբողջական չէ: Հետևաբար մենք անկարող էինք որոշել՝ արդյոք անհրաժեշտ էր նշված գումարների հետ կապված որևէ ճշգրտում կատարել:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Հնկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԻ-ի Վարքագիրը) և Հայաստանի Հանրապետությունում կիրարկելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

#### Այլ հանգամանք – համադրելի տեղեկատվություն

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համադրելի տեղեկատվությունը աուդիտ անցած չէ:

#### Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հնկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Հնկերության ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հնկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հնկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հնկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

#### Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հնկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հնկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևավոյենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, աուդիտորը չի կարող երաշխավորել, որ ապագա իրադարձությունները կամ հանգամանքները չեն կարող հանգեցնել նրան, որ Հնկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր առմամբ ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Հնկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Այ էՖ ՓԻ» ՍՊԸ

Աշոտ Բարսեղյան  
Տնօրեն

Անդրեյ Բախշեյան  
Աուդիտի ղեկավար

Երևան,  
08 դեկտեմբերի 2022թ.



Գոլդեն Փելիս Հյուրանոց ՍՊԸ  
Տարեկան ֆինանսական հաշվետվություններ  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

- 4 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
- 5 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 6 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
- 7 Սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն
- 8 Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրությունների ցանկ
- 9 Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ

Կազմակերպության գտնվելու վայրը

ՀՀ, Երևան, Ազատության պող. 2/2

Իրավական ձևը՝

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հիմնական գործունեության նկարագիրը՝

Հյուրանոցային ծառայությունների մատուցում

Տնօրեն՝



Արտաշես Ավետիսյան

Գոլդեն Փելիս Հյուրանոց ՍՊԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

|                                | Ծան. | 2021թ.<br>հազ. դրամ | 2020թ.<br>հազ. դրամ |
|--------------------------------|------|---------------------|---------------------|
| Հասույթ                        | 5    | 1,537,969           | 479,363             |
| Վաճառքի ինքնարժեք              | 6    | (974,360)           | (325,498)           |
| Համախառն շահույթ               |      | 563,609             | 153,865             |
| Իրացման ծախսեր                 | 7    | (1,013,836)         | (852,425)           |
| Վարչական ծախսեր                | 8    | (542,814)           | (294,812)           |
| Գործառնական այլ եկամուտ        |      | 122,434             | 59,452              |
| Գործառնական այլ ծախսեր         |      | (9,257)             | (25,287)            |
| Գործառնական շահույթ/(վնաս)     |      | (879,864)           | (959,207)           |
| Ֆինանսական եկամուտներ          | 9    | 8,955               | 12,578              |
| Ֆինանսական ծախսեր              | 9    | (674,432)           | (921,495)           |
| Այլ օգուտ (կորուստ)            |      | 1,411,552           | (1,410,707)         |
| Շահույթ/(վնաս) հարկումից առաջ  |      | (133,789)           | (3,278,831)         |
| Շահութահարկի գծով փոխհատուցում | 10   | 42,380              | 41,984              |
| Տարվա վնաս                     |      | (91,409)            | (3,236,847)         |
| Այլ համապարփակ եկամուտ         |      | -                   | -                   |
| Ընդամենը համապարփակ եկամուտ    |      | (91,409)            | (3,236,847)         |

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 6-30) հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2022թ. դեկտեմբերի 8-ին:

Արտաշես Ավետիսյան  
Տնօրեն



Ռուբեն Ղազարյան  
Գլխավոր հաշվապահ

Գոլդեն Փելիս Հյուրանոց ՍՊԸ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

|                                                      |      | 31.12.2021        | 31.12.2020        | 01.01.2020        |
|------------------------------------------------------|------|-------------------|-------------------|-------------------|
|                                                      | Ծան. | հազ. դրամ         | հազ. դրամ         | հազ. դրամ         |
|                                                      |      |                   | Աուդիտ<br>չանցած  | Աուդիտ<br>չանցած  |
| <b>Ակտիվներ</b>                                      |      |                   |                   |                   |
| <b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>                           |      |                   |                   |                   |
| Հիմնական միջոցներ                                    | 11   | 26,339,020        | 26,664,064        | 27,185,038        |
| Ոչ նյութական ակտիվներ                                | 12   | 55,011            | 66,234            | 77,212            |
| Տրված երկարաժամկետ փոխառություններ                   | 13   | 3,265,644         | 3,565,865         | 3,274,727         |
| Ներդրումային արժեթղթեր                               |      | -                 | 198,352           | 365,834           |
|                                                      |      | 29,659,675        | 30,494,515        | 30,902,811        |
| <b>Ընթացիկ ակտիվներ</b>                              |      |                   |                   |                   |
| Պաշարներ                                             | 14   | 155,534           | 168,818           | 110,389           |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր                  | 15   | 77,976            | 262,280           | 645,408           |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ                | 16   | 65,594            | 11,900            | 51,666            |
|                                                      |      | 299,104           | 442,998           | 807,463           |
| <b>Ընդամենը ակտիվներ</b>                             |      | <b>29,958,779</b> | <b>30,937,513</b> | <b>31,710,274</b> |
| <b>Սեփական կապիտալ</b>                               |      |                   |                   |                   |
| Կանոնադրական կապիտալ                                 | 17.1 | 42,120,004        | 42,120,004        | 42,120,004        |
| Վերագնազատման պահուստ                                | 17.2 | 15,511,369        | 15,658,350        | 15,818,200        |
| Կապիտալի այլ հոդված                                  | 17.3 | (33,841,626)      | (33,841,626)      | (33,841,626)      |
| Կուտակված շահույթ (վնաս)                             |      | (8,917,369)       | (8,972,941)       | (5,895,944)       |
|                                                      |      | 14,872,378        | 14,963,787        | 18,200,634        |
| <b>Պարտավորություններ</b>                            |      |                   |                   |                   |
| <b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>                 |      |                   |                   |                   |
| Վարկեր և փոխառություններ                             | 18   | 10,792,232        | 9,623,304         | 9,447,594         |
| Հետաձգված պարտավորություններ                         | 10   | 3,427,171         | 3,469,551         | 3,511,535         |
|                                                      |      | 14,219,403        | 13,092,855        | 12,959,129        |
| <b>Ընթացիկ պարտավորություններ</b>                    |      |                   |                   |                   |
| Վարկեր և փոխառություններ                             | 18   | 406,419           | 2,636,929         | 336,810           |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր                 | 19   | 460,579           | 243,942           | 213,701           |
|                                                      |      | 866,998           | 2,880,871         | 550,511           |
| <b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b> |      | <b>29,958,779</b> | <b>30,937,513</b> | <b>31,710,274</b> |

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 6-30) հաստատվել և ստորագրվել են Հնկերության ղեկավարության կողմից 2022թ. դեկտեմբերի 8-ին:

Արտաշես Ավետիսյան  
Տնօրեն

Ռուբեն Նազարյան  
Գլխավոր հաշվապահ




Կ. Ս.

Գոլդեն Փելիս Հյուրանոց ՍՊԸ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

|                                                                                    | 2021թ.<br>հազ. դրամ | 2020թ.<br>հազ. դրամ |
|------------------------------------------------------------------------------------|---------------------|---------------------|
| <i><b>Գործառնական գործունեություն</b></i>                                          |                     |                     |
| Հաճախորդներից ստացված դրամական միջոցների մուտք                                     | 1,833,705           | 614,759             |
| Այլ մուտքեր                                                                        | 108,814             | 36,479              |
| Վճարված հարկերի վերադարձ                                                           | 38,000              | 300,000             |
| Տոկոսային եկամուտ                                                                  | 8,955               | 12,579              |
| Վճարումներ գնումների գծով                                                          | (1,151,164)         | (529,743)           |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից                                          | (723,615)           | (433,167)           |
| Վճարումներ այլ հարկերի գծով                                                        | (27,764)            | (33,047)            |
| Այլ ելքեր                                                                          | (28,471)            | (36,177)            |
| <i><b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b></i>         | <b>58,460</b>       | <b>(68,317)</b>     |
| Ներդրումային գործունեությունից                                                     |                     |                     |
| Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերումից ելքեր                                            | (175,030)           | (1,968)             |
| Տրամադրված փոխառության գծով                                                        | 11,500              | 3,500               |
| <i><b>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</b></i> | <b>(163,530)</b>    | <b>1,532</b>        |
| <b>Ֆինանսավորման գործունեությունից</b>                                             |                     |                     |
| Վարկերի և փոխառությունների ստացումից մուտքեր                                       | 3,496,490           | 285,000             |
| Վարկերի և փոխառությունների մարումից ելքեր                                          | (3,025,187)         | (290,000)           |
| Վճարված տոկոսներից ելքեր                                                           | (505,601)           | (133,214)           |
| Բաժնային այլ գործիքներից մուտքեր                                                   | 204,721             | 167,483             |
| <i><b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</b></i>          | <b>170,423</b>      | <b>29,269</b>       |
| <i><b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ</b></i>                      | <b>65,353</b>       | <b>(37,516)</b>     |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա    | (11,659)            | (2,250)             |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ                        | 11,900              | 51,666              |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ                        | 65,594              | 11,900              |



Գույնն Փելիս Հյուրանոց ՍՊԸ

Մեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

|                                 | Կանոնադրական կապիտալ |            | Կապիտալի այլ հոդված |        | Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ |             | Կուտակված վնաս |            | Ընդամենը   |             |
|---------------------------------|----------------------|------------|---------------------|--------|------------------------------------------|-------------|----------------|------------|------------|-------------|
|                                 | հազար դրամ           | հազար դրամ | հազար դրամ          | հոդված | հազար դրամ                               | հազար դրամ  | հազար դրամ     | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ  |
| թողն առ 1 հունվարի 2020թ.       | 42,120,004           | -          | (33,841,626)        | -      | 15,818,200                               | (5,895,944) | 18,200,634     | -          | -          | -           |
| ա վնաս                          | -                    | -          | -                   | -      | -                                        | -           | (3,236,847)    | -          | -          | (3,236,847) |
| զեւահատման պահուստից տեղափոխում | -                    | -          | -                   | -      | (159,850)                                | 159,850     | -              | -          | -          | -           |
| անապարփակ եկամուտ               | -                    | -          | -                   | -      | -                                        | -           | -              | -          | -          | -           |
| թողն առ 31 դեկտեմբերի 2020թ.    | 42,120,004           | -          | (33,841,626)        | -      | 15,658,350                               | (8,972,941) | 14,963,787     | -          | -          | -           |
| ա վնաս                          | -                    | -          | -                   | -      | -                                        | (91,409)    | -              | -          | -          | (91,409)    |
| զեւահատման պահուստից տեղափոխում | -                    | -          | -                   | -      | (146,981)                                | 146,981     | -              | -          | -          | -           |
| անապարփակ եկամուտ               | -                    | -          | -                   | -      | -                                        | -           | -              | -          | -          | -           |
| թողն առ 31 դեկտեմբերի 2021թ.    | 42,120,004           | -          | (33,841,626)        | -      | 15,511,369                               | (8,917,369) | 14,872,378     | -          | -          | -           |

Բովանդակություն

|                                                                |    |
|----------------------------------------------------------------|----|
| Անկախ աուդիտորի եզրակացություն .....                           | 2  |
| 1. Ընկերության մասին .....                                     | 11 |
| 2. Պատրաստման հիմքերը .....                                    | 12 |
| 3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ ..... | 12 |
| 4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում .....             | 14 |
| 5. Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ .....                | 18 |
| 6. Վաճառքի ինքնարժեք .....                                     | 18 |
| 7. Իրացման ծախսեր .....                                        | 18 |
| 8. Վարչական ծախսեր .....                                       | 19 |
| 9. Ֆինանսական եկամուտներ (ծախսեր) .....                        | 19 |
| 10. Շահութահարկ .....                                          | 19 |
| 11. Հիմնական միջոցներ .....                                    | 21 |
| 12. Ոչ նյութական ակտիվներ .....                                | 22 |
| 14. Պաշարներ .....                                             | 23 |
| 15. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր .....                  | 23 |
| 16. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ .....                | 23 |
| 19. Վարկեր և փոխառություններ .....                             | 24 |
| 20. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր .....                 | 25 |
| 20. Կապակցված կողմեր .....                                     | 25 |
| 21. Պայմանական պարտավորություններ .....                        | 26 |
| 22. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն .....              | 26 |
| Հավելված 1 Իրական արժեքի չափման բացահայտումներ .....           | 30 |

## Գոլդեն Փելիս Հյուրանոց ՄԴԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից և դրանց մասը կազմող ծանոթագրություններ  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

### 1. Ընկերության մասին

«Գոլդեն Փելիս Հյուրանոց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև Ընկերություն) հիմնադրվել է 2000թ. նոյեմբերի 14-ին ՀՀ օրենսդրության համաձայն: Ընկերության հիմնական գործունեությունը հյուրանոցային ծառայությունների մատուցումը: Ընկերությունը հանդիսանում է «Գոլդվիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան, «Ֆիլատելիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավահաջորդը՝ բաժանիչ հաշվեկշռին համապատասխան, ինչպես նաև «Գոլդեն Փելիս Մարգահամալիր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

Ընկերությունը հյուրանոցային ծառայությունների հետ մեկտեղ մատուցում է ռեստորանային և այլ հարակից ծառայություններ հյուրանոցային համալիրներում առկա ենթակառուցվածքների միջոցով: Հաշվետու ամսաթվի դրությամբ ընկերությունը շահագործում է երկու դեյուրս դասի հյուրանոց:

Ընկերությունը շահագործում է նաև Արզնիում գտնվող կահույքի արտադրամասը կահույքի արտադրության և վաճառքի նպատակով:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության պողոտա 2/2:

### Բաժնետերերը

Ընկերության 93.7%-ի մասնակիցն է Մեծ Բրիտանիայում գրանցված <<Գոլդեն Գրուպ Լիմիթեդ>> ՓԲԸ-ն, որի 100 տոկոս բաժնետոմսերի սեփական, իսկ մնացած բաժնեմասերը պատկանում են ՀՀ քաղաքացի Քնարիկ Տիգրանի Սահակյանին (6.3%):

Կապակցված կողմերի հետ գործարքները մանրամասնված են Ծանոթագրություն 20-ում:

Ընկերության աշխատողների միջին թվաքանակը 2021թ. ընթացքում կազմել է 123 (2020թ.՝ 101):

### Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Չեռնաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: COVID-19 համավարկան ավելի մեծացրեց Հայաստանում գործունեություն իրականացնելու պայմանների հետ կապված անորոշությունը:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գնահատականն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

## Գոյլեն Փելիս Հյուրանոց ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

### 2. Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 22-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հայաստանի Հանրապետության դրամական միավորով (22 դրամ), որը նաև Հնկերության գործառնական արժույթն է:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն՝ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

### Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

#### *Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ*

*ա) 2021թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ*

Առկա չեն նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 01.01.2021թ.-ից, և որոնք ունեցել են էական ազդեցություն Հնկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

*բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ*

Առկա չեն նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք հրապարակված են, սակայն դեռևս ուժի մեջ չեն մտել, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Հնկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

### 3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հնկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, բանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

## Գուդեն Փեկիս Հյուրանոց ՄԴԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

### *Գնահատումներ և ենթադրություններ*

#### *Անընդհատության սկզբունք*

Ընկերությունը վերջին տարիներին կրել է ֆինանսական վնասներ, մասնավորապես՝ 2021թ.-ին Ընկերությունը կրել է 91,409 հազար դրամի ֆինանսական վնաս (2020թ.-ին՝ 3,236,847 հազար դրամի վնաս), որոնց արդյունքում 31.12.2021թ.-ի դրությամբ Ընկերության կուտակված վնասը կազմել է 8,917,369 հազար դրամ (31.12.2020թ.-՝ 8,972,941 հազար դրամ):

Ընկերության ղեկավարությունը ֆինանսական վնասների արդյունքում առաջացող դրամական միջոցների պակասուրդը րացնում է Ընկերության հիմնադրի կողմից ստացվող փոխառություններով, ինչպես նաև առևտրային բանկերից ստացված վարկերով (ծնթ. 18): Նշված վարկերի և փոխառությունների մնացորդը 31.12.2021թ.-ի դրությամբ կազմել է 11,198,651 հազար դրամ (31.12.2020թ.-՝ 10,970,000 հազար դրամ):

Ընկերության ղեկավարությունը մշակել և հետևողականորեն իրականացնում է ֆինանսական առողջացման միջոցառումների սլան: Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը կշարունակի իր շարունակական գործունեությունը: Գնահատման ընթացքում ղեկավարությունը դիտարկում է Ընկերության ֆինանսական վիճակը, եկամտաբերությունը, ֆինանսական միջոցների ներգրավվումը հիմնադրի կողմից ֆինանսական օգնության տեսքով:

Ընկերության ղեկավարությունը, հիմնվելով կատարված դատողությունների վրա, ունի հիմնավորված ակնկալիք, որ Ընկերությունը կարող է շարունակել իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում: Ուստի Ընկերությունը շարունակում է որդեգրել անընդհատության սկզբունքը իր ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով:

#### *Իրական արժեքի չափում*

Ընկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում ներառված մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջում են չափումներ իրական արժեքով և/կամ իրական արժեքի բացահայտումով:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը հնարավորինս հիմնվում է դիտարկելի շուկայից ստացվող էլակետային տվյալների վրա: Իրական արժեքի չափումները սահմանելու համար օգտագործվող էլակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող արդյունքները դիտարկելի («իրական արժեքի աստիճանակարգ»):

• *Մակարդակ 1. Նույն ակտիվների կամ պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)*

• *Մակարդակ 2. Դիտարկելի ուղղակի կամ անուղղակի էլակետային տվյալներ, Մակարդակ 1-ի տվյալներից տարբեր*

• *Մակարդակ 3. Ոչ դիտարկելի էլակետային տվյալներ (հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա)*

Իրական արժեքների աստիճանակարգում այն մակարդակը, որին դասվում է իրական արժեքի չափումը, պետք է որոշվի ամենացածր մակարդակի էլակետային տվյալի հիման վրա, որը նշանակալի է ամբողջությամբ վերցրած իրական արժեքի չափման համար: Իրական արժեքի տեղափոխությունները մի մակարդակից դեպի մյուսը ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի են ունենում այդ տեղափոխությունները:

**Գոլդեն Փելիս Հյուրանոց ՍՊԸ**

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

**4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում**

Իր գործունեության արդյունքում Հնկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Արտարժույթային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Հնկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հնկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հնկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

**(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ**

Հնկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Տրված փոխառություններ
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր,
- Ստացված վարկեր և փոխառություններ,

**(բ) Ֆինանսական գործիքներ ըստ դասերի**

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին.

*Ֆինանսական ակտիվներ*

|                                       | 2021<br>հազ.դրամ | 2020<br>հազ.դրամ |
|---------------------------------------|------------------|------------------|
| <i>Ամորտիզացված արժեքով չափվող</i>    |                  |                  |
| Առևտրային դեբիտորական պարտքեր         | 24,777           | 21,537           |
| Տրված երկարաժամկետ փոխառություններ    | 3,265,644        | 3,565,865        |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 65,594           | 11,900           |
|                                       | <b>3,356,015</b> | <b>3,599,302</b> |

*Ֆինանսական պարտավորություններ*

|                                    | 2021<br>հազ.դրամ  | 2020<br>հազ.դրամ  |
|------------------------------------|-------------------|-------------------|
| <i>Ամորտիզացված արժեքով չափվող</i> |                   |                   |
| Վարկեր և փոխառություններ           | 11,198,651        | 12,260,233        |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր     | 460,579           | 243,942           |
|                                    | <b>11,659,230</b> | <b>12,504,175</b> |

## Գողեն Փեյիս Հյուրանոց ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

### (գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները, ժամկետային ավանդները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ինչպես նաև փոխառությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի, վարկերի և փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտարկում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Հավելված 1-ում ներկայացվում է տեղեկատվություն՝ իրական արժեքի աստիճանակարգի, գնահատման մեթոդների և իրական արժեքի աստիճանակարգի մակարդակ 3-ում դասակարգված ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման հետ կապված այլ նշանակալի ոչ դիտարկելի էլակետային տվյալների մասին:

#### *Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ*

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

#### **Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկն է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերությունը ենթարկվում է Պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է ապաստիկ վաճառքից: Ընկերությունը որդեգրել է նախքան հաճախորդի հետ պայմանագիր կնքելը վարկային ռիսկը գնահատելու քաղաքականություն, որը իրականացվում է տեղական մակարդակով: Վարկային նման վարկանիշները հաշվի են առնվում տեղական բիզնես գործունեության ոլորտում:

Նախքան նոր հաճախորդին պայմաններ առաջարկելը, պետք է ստուգվում է վերջինիս վարկունակությունը: Ընկերության ստուգումները ներառում են առկա արտաքին վարկանիշների և որոշ դեպքերում բանկային տեղեկանքների ստուգում: Յուրաքանչյուր հաճախորդի համար սահմանվում են ձեռքբերման գծով սահմանափակումներ, որոնք ներառում են տարածամկետ վճարմամբ վաճառքի թույլատրելի առավելագույն գումարը:

Տնօրենը որոշում է վարկային ռիսկի կենտրոնացումը՝ եռամսյակային կտրվածքով ստուգելով ընթացիկ հաճախորդների վարկունակության վարկանիշը, ինչպես նաև ամսական կտրվածքով անցկացնելով առևտրային դեբիտորական պարտքերի ժամկետայնության վերլուծություն: Հաճախորդի պարտքային ռիսկերը ստուգելիս հաճախորդները դասակարգվում են ըստ վարկային բնութագրերի: Կազմվում է «բարձր ռիսկային» հաճախորդների ցուցակ, որում ընդգրկված հաճախորդներին ապաստիկ վաճառքն իրականացվում է միայն Ընկերության սեփականատիրոջ հաստատմամբ:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև դրամական միջոցների և դրանց համարժեքների և բանկերում տեղաբաշխված ավանդների գծով: Ընկերության համար ընդունելի են միայն բարձր վարկանիշ ունեցող տեղական բանկերը:

#### **Արժուրային ռիսկ**

Արտարժուրային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության առանձին կազմակերպությունների գործարքներն արտահայտված չեն վերջիններիս գործառնական արժույթով: Ընկերության քաղաքականության համաձայն՝ թույլատրվում է Ընկերության գործառնական արժույթով պարտավորությունները հնարավորության դեպքում գործընկերներին մարել տվյալ արժույթով արտահայտված գործարքներից ստացված դրամական միջոցներով:

**Գոլդեն Փեյս Հյուրանոց ՄԴԸ**

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Սույն քաղաքականության շարունակական արդյունավետությունը վերահսկելու համար ղեկավարությունն ստանում է մարման ենթակա պարտավորությունների և ապագա դրամական միջոցների պահուստի գծով ամսական կանխատեսում՝ ըստ Հնկերության հիմնական արժույթների:

Հնկերության արտարժույթային ռիսկը հիմնականում առաջանում է մատակարարների կողմից կատարված ձեռքբերումներից կամ մատուցած ծառայություններից:

Դրամական միջոցների հոսքերից բացի, Հնկերությունը պլանավորում է նաև ֆինանսավորել համապատասխան արժույթով արտահայտված ծախսերը և արտարժույթային ռիսկի տեղական մակարդակով կատարել ներդրումները՝ համապատասխանեցնելով արժույթը, որով արտահայտված են հասույթը և ծախսերը:

Հնկերության զուտ ենթակայությունը արժույթային ռիսկերին ներկայացված է ստորև՝

2021թ. դեկտեմբերի 31

|                                      | ՀՀ դրամ<br>հազ. դրամ | ԱՄՆ դոլար<br>հազ. դրամ | Եվրո<br>հազ. դրամ  | Ռուս.<br>ռուբլի<br>հազ. դրամ | Ընդամենը<br>հազ. դրամ |
|--------------------------------------|----------------------|------------------------|--------------------|------------------------------|-----------------------|
| <b>Ակտիվներ</b>                      |                      |                        |                    |                              |                       |
| Առևտրային դեբիտորական պարտքեր        | 24,777               | -                      | -                  | -                            | 24,777                |
| Տրված երկարաժամեկտ փոխառություններ   | -                    | 3,265,644              | -                  | -                            | 3,265,644             |
| Դրամական միջոցներ                    | 18,414               | 47,112                 | 68                 | -                            | 65,594                |
|                                      | 43,191               | 3,312,756              | 68                 | -                            | 3,356,015             |
| <b>Պարտավորություններ</b>            |                      |                        |                    |                              |                       |
| Վարկեր և փոխառություններ             | (496,482)            | (2,973,454)            | (7,728,715)        | -                            | (11,198,651)          |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | (106,389)            | (20,017)               | (90,211)           | (4,238)                      | (220,910)             |
|                                      | (602,871)            | (2,993,471)            | (7,818,926)        | (4,238)                      | (11,419,506)          |
| <b>Զուտ դիրք</b>                     | <b>(559,680)</b>     | <b>319,285</b>         | <b>(7,818,858)</b> | <b>(4,238)</b>               | <b>(8,063,546)</b>    |

2020թ. դեկտեմբերի 31

|                                      | ՀՀ դրամ<br>հազ. դրամ | ԱՄՆ դոլար<br>հազ. դրամ | Եվրո<br>հազ. դրամ  | Ռուս.<br>ռուբլի<br>հազ. դրամ | Ընդամենը<br>հազ. դրամ |
|--------------------------------------|----------------------|------------------------|--------------------|------------------------------|-----------------------|
| <b>Ակտիվներ</b>                      |                      |                        |                    |                              |                       |
| Առևտրային դեբիտորական պարտքեր        | 21,024               | -                      | 333                | -                            | 21,357                |
| Տրված երկարաժամեկտ փոխառություններ   | -                    | 3,565,865              | -                  | -                            | 3,565,865             |
| Դրամական միջոցներ                    | 9,557                | 2,342                  | 1                  | -                            | 11,900                |
|                                      | 30,581               | 3,568,207              | 334                | -                            | 3,599,122             |
| <b>Պարտավորություններ</b>            |                      |                        |                    |                              |                       |
| Վարկեր և փոխառություններ             | (65,000)             | (3,261,243)            | (8,933,990)        | -                            | (12,260,233)          |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | (54,207)             | (7,387)                | (57,884)           | (781)                        | (120,258)             |
|                                      | (119,207)            | (3,268,630)            | (8,991,874)        | (781)                        | (12,380,491)          |
| <b>Զուտ դիրք</b>                     | <b>(88,626)</b>      | <b>299,577</b>         | <b>(8,991,540)</b> | <b>(781)</b>                 | <b>(8,781,369)</b>    |



## Գողեն Փեյիս Հյուրանոց ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Հաշվետու ամսաթվի դրությամբ 22 դրամի նկատմամբ եվրոյի 5% արժեզրկման ազդեցությունը եվրոյով արտահայտված ֆինանսական գործիքների վրա (այլ տվյալիների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցնե՞ր տարվա շահույթի և զուտ ակտիվների 461,313 հազար դրամով (2020թ.՝ 368,353 հազ. դրամ) աճի, իսկ 10% արժևորման ազդեցությունը՝ տարվա շահույթի և զուտ ակտիվների նվազման նույն չափով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ 22 դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 5% արժեզրկման ազդեցությունը ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական գործիքների վրա (այլ տվյալիների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցնե՞ր տարվա շահույթի և զուտ ակտիվների 13,091 հազար դրամով (2020թ.՝ 12,283 հազ. դրամ) աճի, իսկ 5% արժևորման ազդեցությունը՝ տարվա շահույթի և զուտ ակտիվների նվազման նույն չափով:

### *Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հնկերության գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական վճարներից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Հնկերության ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված ռիսկերի հետ:

Համաձայն Հնկերության քաղաքականության՝ Հնկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի ողջամիտ ժամկետում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ղեկավարությունն ստանում է 12 ամսվա դրամական միջոցների հոսքերի գծով ամսական կանխատեսումներ, ինչպես նաև մանրամասներ դրամական միջոցների մնացորդների մասին: Համաձայն հաշվետու տարեվերջի դրությամբ կատարված վերոնշյալ կանխատեսումների՝ ֆինանսական տարվա ընթացքում Հնկերությունը կունենա բավարար միջոցներ՝ ակնկալվող ողջամիտ ժամկետներում պարտավորությունները մարելու համար:

### *Կապիտալի վերաբերող բացահայտումներ*

Հնկերությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Հնկերության գործունեության անընդհատության սկզբունքը մինևույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրավված և սեփական միջոցների մնացորդների օպտիմալացման ճանապարհով: Հնկերության կապիտալը ներառում է սեփական կապիտալի բոլոր տարրերը (այն է՝ կանոնադրական կապիտալ, կապիտալի այլ հոդված, կուտակված վնաս և վերագնահատման պահուստ), բացի դրամական միջոցների հոսքերի հեջավորման գծով պահուստի գումարներից:

Հնկերությունը կառավարում է իր կապիտալն այնպես, որ

- Հնկերությունը կարողանա շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում (գործունեության անընդհատությունը)՝ բաժնետերերի և այլ շահառուների համար ապահովելով եկամուտներ և հատուցումներ,

- Հնկերությունը կարողանա բաժնետերերի համար ապահովել պատշաճ եկամուտ՝ ապրանքների և ծառայությունների գները սահմանելով ռիսկի մակարդակին համապատասխան:

Հնկերությունը սահմանում է անհրաժեշտ կապիտալի չափը գնահատված ռիսկերին համապատասխան: Հնկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների փոփոխություններին և ակտիվների ռիսկերի բնույթին համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Հնկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվող շահաբաժինների չափը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ պարտքը նվազեցնելու նպատակով վաճառել ակտիվները:

Գոլդեն Փելիս Հյուրանոց ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ընկերությունն իրականացնում է կապիտալի նկատմամբ հսկողություն՝ պարտքի և ճշգրտված կապիտալի հարաբերակցության սկզբունքով: Սույն հարաբերակցությունը հաշվարկվում է որպես զուտ պարտքը համաբերված ճշգրտված կապիտալին: Չուտ պարտքը իրենից ներկայացնում է ընդհանուր պարտքը՝ հանած դրամական միջոցների մնացորդը:

|                                                  | 2021թ.<br>հազ. դրամ | 2020թ.<br>հազ. դրամ |
|--------------------------------------------------|---------------------|---------------------|
